

ԱՂ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱՐԱԴ ԱՌԱՔԵԼՅԱՆ. ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ.

ՀԱՏՈՐ Բ. ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, 1964, 467 էջ:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վարադ Առաքելյանի «Հայերենի շարահյուսությունը» աշխատության երկրորդ հատորը նվիրված է միակազմ, թերի, բարդ (ստորադասական ու համադասական) նախադասությունների, ինչպես նաև շարահարության, ուրիշի խոսքի, կոչականի, միջանկյալ և ներդրյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների քննությանը և առաջինի անմիջական շարունակությունը լինելով՝ ամբողջականացնում է հայերենի քերականության կարևոր բաժիններից մեկի՝ շարահյուսության ուսումնասիրությունը:

Սկզբից պետք է ասել, որ եթե առաջին հատորում քննարկված հարցերը, որ բացառապես պարզ նախադասության են վերաբերում, համեմատաբար ավելի լայն շափով, ապա երկրորդ հատորում քննարկված և, հատկապես, բարդ նախադասության վերաբերող հարցերը շատ համառոտ ու սեղմ են ներկայացվել անցյալի քերականական աշխատություններում: Իսկ դա արդեն վկայում է բարդ նախադասության ուսումնասիրության ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակության ու կարևորության մասին: Անտարակույս, այդ գիտակցությամբ է լեզվաբան Վարադ Առաքելյանը ձեռնամուխ եղել բարդ նախադասության ուսումնասիրության գործին՝ տալով նրա առավել ամբողջական վերլուծությունն ու նկարագիրը:

Գրախոսվող աշխատության մեջ թե՛ ծավալային և թե՛ գիտական վերլուծության տեսակետից ղլխավոր ու առանցքային տեղ է բռնում հենց բարդ նախադասության քննությունը (էջ 82—362): Դս. հեղինակը առաջ է տարել երկու պլանով. բարդ նախադասությունը բնութագրելուց հետո նա կանգ է առել նախ բարդ ստորադասական, ապա բարդ համադասական նախադասությունների վրա և համակողմանի վերլուծությամբ բացահայտել նրանց կառուցվածքային առանձնահատկությունները, նրանց կազմի մեջ մտնող նախադասությունների միջև դրսևորվող բազմազան կապերն ու հարաբերությունները:

Այսպես, բարդ ստորադասական նախադասությունները քննելիս Վ. Առաքելյանը իր հիմնական ուշադրությունը սեռել է այն բանին, թե նրանց կազմում ինչպիսի երկրորդական նախադասություններ են լինում, երկրորդական նախադասությունները գլխավորների հետ ինչպիսի ստորադասական շաղկապներով են կապակցվում, ղլխավորները՝ ինչպիսի հարաբերյալներ, իսկ երկրորդականները ինչպիսի հարաբերականներ են ունենում, երկրորդական նախադասությունը ղլխավորի համար շարահյուսական ինչ պաշտոն է կատարում և այլն:

Աշխատության մեջ այդ տեսանկյունով են քննվել ենթակա, ստորոգելիական վերադիր, որոշիչ, բացահայտիչ, հատկացուցիչ, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիր (մատուցման, հանգման, միջոցի, անջատման և այլն) և պարագա (ժամանակի, տեղի, պատճառի, սլայմանի, նպատակի, չիջական, հետևանքի, ձևի, չափ ու քանակի և այլն) երկրորդական նախադասությունները:

Բայց հենց այս դեպքում էլ հեղինակը ոչ թե ինչ-որ մեխանիկական մոտեցում է հանդես բերել, այլ տարբերակել է իրարից ենթակա և վերադիր երկրորդական, ենթակայի կամ որևէ զոյական անդամի լրացում երկրորդական, ստորոգյալի կամ որևէ բայական անդամի լրացում երկրորդական նախադասությունները և տվել նրանցից յուրաքանչյուրի ամփոփ նկարագիրը:

Իր ամբողջ ուսումնասիրությունը խարսխելով արևելահայ գրական լեզվի հարուստ փաստերի վրա՝ Վ. Առաքելյանը դրանցից բխեցրել և լեզվաբանական յուրահատուկ զգացողությամբ ու հմտությամբ նկատել-պարզաբանել է բարդ ստորադասական նախադասության շարահյուսական իրակություններն ու օրենքները: Ըստ որում նա միաժամանակ ցույց է տվել, թե ղլխավոր ու երկրորդական նախադասությունները բարդ ստորադասական նախադասության կազմում իրենց

շարադասություններին չպատկեր են ներկայացնում, թե նրկորդական և համապատասխան գլխավոր նախադասություններին ինչպիսի ժամանակներով են հարաբերակցվում իրար հետ...

Այդ ամենով ինչքան հարտացել է կատարված քննության բովանդակությունն, այնքան մեծացել է նրա տեսական ու գործնական նշանակությունը:

Այլ կերպ լինել չի էլ կարող: Շաղափուկությունը, որ արտացոլում է բառերի կապակցման, նախադասությունների կառուցման օրենքներն ու օրինաչափությունները կամ թե չէ՝ պատկերում լեզվի բուն քերականական կառուցվածքը, ձևաբանության համեմատությամբ առավել մեծ գործնական նպատակներ է հետապնդում. այսինքն՝ բառերի կապակցման, նախադասությունների կառուցման օրենքների ու օրինաչափությունների բացահայտմամբ ճիշտ խոսելու ու գրելու ուղիներ է նշում և մեծապես օգնում, նպաստում՝ տիրապետելու լեզվի հիմունքներին:

Այդ տեսակետից լիակատար քննություն է բունում նաև բարդ համադասական նախադասու-
թյան բաժինը, որտեղ և բավարար լուծում է ստացել այն հիմնական հարցը, թե ինչպես է կա-
ռուցվում բարդ համադասական նախադասությունը, և դրա կազմի մեջ մտնող նախադասություն-
ներն էլ միմյանց նկատմամբ ինչպիսի հարաբերություններ են արտահայտում: Եվ որովհետև
այդ հարաբերությունները պայմանավորվում են շաղկապների իմաստային նշանակություններով,
վ. Առաքելյանը դրանց համապատասխան խմբավորել է համադասական շաղկապները և գտնելով,
որ համադասական նախադասությունները կարող են արտահայտել «համադրական, հակադրա-
կան, տրուական, հարակցական, զույգորական, մասամբ և մեկնական հարաբերություններ»
(էջ 294), մեկ առ մեկ քննել ու ցույց տվել նրանց բնույթն ու կառուցվածքային առանձնա-
հատկությունները:

Այսպես՝ համադրական համարելով և, ու, հակադրական՝ իսկ, բայց, սակայն, րե չէ, ոչ, էրե ոչ, ապա րե ոչ, այլապես, հակառակ դեպքում, այլ կերպ, ոչ քե... այլ, ոչ քե... այլ ըստ-
ֆակտական(ր) և այլն, տրոհական՝ կամ, րե, մերք... մերք, մեկ... մեկ և այլն, մեկնական
ալիսինքն, այն է, այլ ի... համադասական շղկապները, նա պարզաբանել և բնորոշ օրինակ-
ներով ցուցադրել է, թե նրանցով ինչ բնույթի բարդ նախադասություններ են կազմվում, համա-
դասական կապակցության մեջ ո՞ր նախադասությունը ինչպիսի հարաբերություն է արտահայտում,
մեկի և մյուսի բաշխողությունները ինչպիսի ժամանակներով են հարաբերակցվում իրար հետ
և այլն:

Լեյդորինակ քննությանը հեղինակը կարողացել է բացահայտել բարդ համադասական նախադասությունների շարահյուսական բազմաբարդ դրսևորումներն ու իրողությունները, միմյանց նկատմամբ նրանց ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները, բավականաչափ ընդլայնելով նախկինում եղած պատկերացումները:

Հետևություն. բարդ ստորադասական և քաբդ համադասական նախադասությունների այն բնությունը, որ անցյալի ու ժամանակակից լեզվական նյութերի հիման վրա կատարել է վ. Առաքելյանը, ավելի ամբողջական բնույթ է կրում և իր հարուստ բովանդակությամբ խնկապես մի նոր ու լուրջ նվաճում է հարցի ուսումնասիրության բնագավառում:

Նույնը շատ ավելի որոշակի պետք է ասել շարահարության մասին, — շարահյուսական մի շատ կարևոր իրողություն, որ առաջին անգամ առանձնակի քննության առարկա է դարձրել հենց ինքը գրքի հեղինակը:

Շարահարությունը, իբրև առանց շաղկապների ու շաղկապային բառերի կապակցվող նախադասությունների ամբողջություն, ըստ էության բարդ համադասական ու ստորադասական նախադասությունների միջին տեղն է բռնում և ըստ այդմ էլ նթև մի մասով առաջինների, ապա մի այլ մասով երկրորդների հետ է առնչակցվում:

Շարահարությանը կազմված այն նախադասությունները, որոնց «առանձին մասերը ավելի անկախ են և միմյանց հետ կապվում են գործողությունների հաղորդման միաժամանակությամբ կա՛մ համատեղությամբ, ժամանակների հետևողական հաջորդությամբ, փոխադարձաբար միմյանց համապատասխան երևույթների նկարագրությամբ» (էջ 364), Վ. Առաքելյանը համարում է համադասությանը առավել մոտ նախադասություններ և նրանց կապակցումը կոչում անկախ շարահարություն: Իսկ այն անշղկկապ յարդ նախադասությունները, «որոնց առանձին մասերի մեջ զոյություն ունի փոխադարձ կախվածության հարաբերություն», նա մոտ է համարում ստորադասականներին և նրանց կապակցումն էլ կոչում կախյալ շարահարություն:

Դա երևույթի իրական վիճակից բխող ստորաբաժանում է, որը և՛ ճիշտ լինելով՝ չնարավորություն է ընձեռնել հեղինակին՝ ոչ միայն տարբերակելու անկախ շարահարությամբ բարդ նախադասությունը կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունից, այլև պարզելու յուրա-

յանչուրի տարատեսակները՝ իրենց մասերի արտահայտած նշանակություններով ու հարաբերություններով:

Աշխատության մեջ պարզ ու հստակ են մեկնաբանվել նաև ուրիշի խոսքն ու կոչականը, ինչպես մեկի, այնպես էլ մյուսի վերաբերյալ լեզվական րավական հարուստ նյութեր ունենալով իր ձևերի տակ՝ Վ. Առաքելյանը մանրամասնորեն րաջատրել է նրանց շարահյուսական էությունն ու նշանակությունը. ուրիշի խոսքը բաժանելով երեք տեսակի՝ ուղղակի խոսք, անուղղակի խոսք, ազատ-ուղղակի կամ անիսկական-ուղղակի խոսք, նա ցույց է տվել դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, հեղինակային խոսքի հետ ունեցած կապի ու հարաբերության բնույթը:

Այդպես և ներկայացված են կոչականի արտահայտման ձևերը, հուզարտահայտչական, հնչերանգային, շարադասական դրսևորումները, որոնցով էլ ոչ միայն նրա պարզ պատկերը, այլև տեղն ու դերն է որոշվում հայոց լեզվի քերականական կառուցվածքի մեջ:

Գրախոսվող աշխատության ամենադժվար արժանիքն այն է, որ հեղինակը շարահյուսական երևույթների քննությունը առաջ է տարել լեզվի ընձեռած հարուստ փաստերի ու տվյալների հիման վրա և ըստ այդմ էլ կարողացել տալ նրանց էական ճիշտ վերլուծությունն ու գնահատականը:

Այդ իմաստով ուշագրավ են նաև միակզմ, թերի նախադասությունների, այլև միջանկյալ, ներդրյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների նկարագրությունն ու քննությունը, որտեղ նկատելի են ինչպես նոր, այնպես էլ անցյալի նվաճումները համալրող մեկնաբանություններն ու բացատրությունները:

Վ. Առաքելյանն ընդհանրապես խոր լուսաբանելով շարահյուսական երևույթներն ու իրականությունները, առանձին դեպքերում որոշ յարդություններ չի հաղթահարել կամ, ավելի ճիշտ, չի կամեցել հաղթահարել: Ամենից առաջ թե՛ առաջին և թե՛ սույն հատորում նույնիսկ չի նշվել, թե անցյալում ովքեր են զբաղվել արևելահայերենի շարահյուսության ուսումնասիրությամբ, ովքեր ինչպես են ըմբռնել ու մեկնաբանել այս կամ այն շարահյուսական հարցը... Դա մեր կարծիքով չունի և ոչ մի արդարացում, որովհետև հենց ինքը՝ շարահյուսության ամբողջական ուսումնասիրությունն է առաջադրում այդպիսի և կամ անցյալի ժառանգությունն ըստ ամենայնի արժեքավորելու, գնահատելու, նրա դրականն ու թերին պարզաբանելու պահանջը, եվ ինչու է ընթերցողը չպետք է գիտենա, թե ինչն է, որ անցյալից անխուսափելիորեն փոխանցվել ու, անշուշտ, ինքնատիպ շարադրանքով արտացոլվել է հեղինակի աշխատության մեջ, և ինչն է, որ նոր է, կամ ինչը՝ ավելի լայն ու հանդամանորեն լուսաբանված այնտեղ...

Երկրորդ. վերջին ժամանակներս հատկապես «մոդա» է դարձել առանց գիտական հիմնավորման ընդդեմ գնալ վաղուց քաղաքացիության իրավունք ստացած քերականական այս կամ այն բմբռնմանը, հասկացությանն ու անվանմանը և փոխարենը հայ քերականության մեջ «մոծել» զանազան անհեթեթություններ, պատճենահանված անհաջող անվանումներ (տերմիններ) և այլն:

Այդ տեսակետից, դժբախտաբար, որոշ խոցելի կողմեր ունի նաև Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» աշխատությունը, որտեղ և ըստ էության մերժված են «աանեթակա նախադասություն», «անդեմ նախադասություն», «զեղչված ենթակայով նախադասություն», «զեղչված ստորոգյալով նախադասություն»... ընդունված և երևույթների էությունը լավագույնս արտահայտող հասկացությունները և ուսերենի քերականական անվանումների պատճենավորմամբ գործածված, ասենք, այսպիսի հասկացություններ՝ «անորոշ-դիմավոր նախադասություն» («Неопределенно-личное предложение»), «ընդհանրացնող-դիմավոր նախադասություն» («Обобщенно-личное предложение»), «անորոշ դերրայով անդեմ նախադասություն» («Инфинитивно-безличное предложение») և այլն:

Նման մոտեցումն ունեցել է բացասական հետևանքներ և պատճառ դարձել, որ որոշ երևույթներ բացատրվեն ոչ ճիշտ ձևով. ուսերենի քերականությանը ուղղակի հետևելով՝ Վ. Առաքելյանն, օրինակ, անդեմ է համարում ոչ միայն անորոշ դերրայով արտահայտվող իսկապես անդեմ, այլև դիմավոր րայով (իսկ դա ցույց է տալիս, որ դիմավորն ու անդեմը անհարիր հասկացություններ են)՝ արտահայտված անենթակա նախադասությունները (տե՛ս էջ 19—31):

Նրբորդ. աշխատության մեջ տեղ են գտել որոշ անճշտություններ, սխալ բացատրություններ:

Սխալ է կարծել, թե «Բաղմաթիվ ներգործական և շեղոք բայերի անորոշ դերբայները կապակցվելով լինել բայի ներկայի, ըղձականի և զակի երրորդ գեմքի ժխտականի կամ գործողության կատարման անհնարինությունը արտահայտող ու շաղկապով գործածվող դրականի հետ, կազմում են անդամ նախադասություններ» (էջ 25)։ այնինչ նման դեպքերում անորոշն ու լինել բայը միասին (օրինակ՝ «Հետը խոսել չի լինում», «Ապրել չի լինիլ էսպես ամեն օր» և այլն) ոչ լին «մի միասնական ստորոգյալ», այլ այնպիսի կապակցություն են, որտեղ անորոշը՝ զուտ ենթակայի, իսկ լինել բայը ստորոգյալի պաշտոնն է կատարում։

Մենք համաձայն չենք հեղինակի նաև այն մտքին, թե «հայերենում անորոշ դերբայով անդամ նախադասությունների գործածությունը շատ տարածված չէ» և կամ՝ «Անորոշ դերբայով անդամ նախադասությունը արտահայտում է ապառնի ժամանակ» (էջ 38)։ Նախ՝ հայերենում անդամ նախադասությունները հիմնականում կազմվում են անորոշ դերբայով, որն էլ հենց նրա բուն բայական, բավական ծավալուն կիրառություններից մեկն է, և ապա՝ անորոշն իբրև գործողության կամ եղելության ընդհանուր գաղափարը ցույց տվող դերբայ, երբեք որևէ կոնկրետ, ապառնի թե մի այլ, ժամանակ չի արտահայտում։

Իսկ վերջավորվող հին ապառնի դերբայը ժամանակի ընթացքում զրկվելով իր դերբայական նշանակությունից՝ դարձել է ածական կամ մակբայ, և, իբրև այդպիսին, ստորոգելիական վերագրի կիրառությամբ հաճախ անհնարակա նախադասություններ է կազմում։ Մինչդեռ, չգիտես ինչու, ածականը կամ մակբայը հեղինակը ներկայացնում է հին անունով և անդամ համարում նրանցով կազմվող անենթակա նախադասությունները (տե՛ս էջ 32)։

Պարզորոշ չէ ուր(ը) հարաբերական դերանվան և ուր ստորադասական շաղկապի տարբերակումը։ Ընկ. Առաքելյանը մեկը և մյուսը մերթ հավասարապես դերանուն ու շաղկապ, մերթ դերանունը՝ դերանուն, իսկ շաղկապը՝ շաղկապ և մերթ էլ դերանունը շաղկապի վերածվող միավոր է համարում։ Բայց չէ՞ որ շատ վաղուց ուր շաղկապը սահմանազատվելով ու հարաբերական դերանունից՝ թե՛ իր բառաիմաստային նշանակությամբ և թե՛ ձևաբանական արժեքով արմատապես տարբերվում է դրանից։ Եյսինքն՝ ուր դերանունը և ուր շաղկապը տարբեր՝ համանուն կամ նույնանուն բառեր են, որոնցից մեկը հոգ է առնում, հոլովվում է, ունի հոգնակի թիվ և, ասենք, համապատասխանում է ռուսերենի КОТОРЫЙ հարաբերական դերանվանը, իսկ մյուսը զուրկ է այդպիսի հատկանիշներից և համարժեք է սոսկ ռուսերենի ЧТО շաղկապին։

Զարմանալի է, որ բարդ նախադասություն լայն ու հանգամանալից քննությունը ներկայացնող աշխատությունից դուրս է մնացել ոչ միայն... այլև համադասական շաղկապը, որ լայն գործածություն ունի հայոց լեզվում և Մ. Աբեղյանի բնութագրմամբ հավելական կապակցություն է կազմում, արտահայտելով հավելական նշանակություն։

Զխոսելով աշխատության կառուցվածքային թերությունների, ինչպես նաև այն մասին, որ զրեթե իսպառ մոռացության են փոխվել կետադրության հարցերը, պետք է ասել, որ այս անգամ ևս հաջող ձևով չեն ներկայացվել բերված օրինակները։ Եթե նախորդ հատորում յուրաքանչյուր լեզվական իրողության վերաբերող ձևերը զատվել են նախադասության մյուս անդամներից՝ վերջիններիս ընդգծմամբ, ապա ներկա հատորում հեղինակը հրաժարվելով նույնիսկ դրանից բոլոր օրինակների բոլոր մասերն է ներկայացրել ընդգծված ձևով, զրկելով ընթերցողին քննարկվող երևույթի օրինակի մեջ հեշտ ու անմիջապես տեսնելու հնարավորությունից։

Այս և նման պակասություններով ու թերություններով հանդերձ, որոնք մասնակի բնույթ են կրում և անխուսափելի են լեզվաբանական մեծ աշխատանքների համար, վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսության» երկրորդ հատորը նույնպես արժեքավոր ավանդ է հայերենի շարահյուսության ուսումնասիրության քննադատում։